

ՀՈԳՇ. Տ. ԱՂԱՆ Ծ. ՎՐԳ. ՊԱՆԻՕԶԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԱԽՏՆՐԱԼԻՈՅ

Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճանի Ս. Աթոռոյս Լուսարարապետ ընտրութեամբը, անցնող Մարտ ամիսէն ի վեր թափուր կը մնար Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Առաջնորդական պաշտօնը:

Ուրախ ենք հոս յայտնելու թէ Ազգիս Վեհափառ Հայրապետը սոյն բարձր պաշտօնին կոչած է Ս. Ուխտիս Երիտասարդ եւ եռանդուն Միաբաններէն Գերշ. Տ. Աղան Ծ. Վրդ. Պալիօզեանը, որ 1975էն ի վեր կը գտնուէր Սիտնի, իբր Առաջն. Փոխանորդ:

Հայր Աղան, քահանայ ձեռնադրուած 1968ին, Միաբանութեանս զարգացած անդամներէն մին է, որ առիթը ունեցած է երեք տարի, 1971-74, հայազիտական ուսմանց հետեւելու Նրիւանի Համալսարանին մէջ: Անկէ ետք տարի մը վարած է ժառ. վարժարանի եւ Ընծայարանի Տեսչութեան կարիւրը պաշտօնը: Բերած է նաեւ իր աշխատակցութիւնը «Սիոն» ամսագրին, ազգային-կրօնական յօդուածներով:



Կիրակի, Նոյեմբերի 29ին, Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, հանդիսաւոր արարողութեամբ տեղի ունեցած է Նորընտիր Առաջնորդի Աթոռ բարձրացումը:

Վեհափառ Հայրապետի Հայր Աղանի Առաջնորդութիւնը հաստատող հեռագրի ընթերցումէն ետք, Առաջնորդ Հայրաւորը ըրած է իր ուխտը եւ տուած իր անդրանիկ քարոզ-պատգամը, որմէ ետք Առաջնորդական Աթոռին վրայ բազմելով ընդունած է Թեմական ու Եկեղեցական Վարչութեանց եւ ժողովուրդի շնորհաւորութիւնները:

«Սիոն», յանուն Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Պատուարժան Միաբանութեան, ջերմագինս կը շնորհաւորէ Նորընտիր Առաջնորդը, մաղթելով անոր արդիւնաւոր պաշտօնավարութիւն եւ մօտալուտ եպիսկոպոսացում: